# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՇՄԳԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

01.03.2017թ

ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Անդրեասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Չախալյան

Բ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Մանուկյան

**1. Գնման գործընթացին ներկայացված հայտերի բացման մասին**

( Ա. Անդրեասյան)

1.1 Գնման գործընթացին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Վիոլա>> ՍՊԸ | Կիևյան փող., 5 շենք, տարածք 43 |
| 2 | <<Դելտա>> ՍՊԸ | Կոմիտասի պող., 55/3 շենք |
| 3 | <<ՌՈՄԱ>> ՍՊԸ | Մարշալ Բաբաջանյան փող., 9/5 շենք |

**2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ իրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են իրավերի պահանջներին համապատասխան:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 <<Դելտա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 <<Վիոլա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտի թիվ 3.1 հավելվածով տրված պատշաճ ձևով մատակարարված համանման (նմանատիպ) ապրանքների ծավալը /կամ հանրագումարային ծավալը/ գումարային արտահայտությամբ չի բավարարում հրավերով սահմանված պահանջներին:

4.3 <<ՌՈՄԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտի թիվ 1 հավելվածի 3-րդ կետում նշված ապրանքների արտադրության երկրների անվանումներում առկա է անհամապատասխանություն, ինչպես նաև այն չի համապատասխանում թիվ 4.2 հավելվածով տրված Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ հայտարարությանը:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

2.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | |
|---|---|---|---|---|
| | | <<Վիոլա>> ՍՊԸ | <<Դելտա>> ՍՊԸ | <<ՌՈՄԱ>> ՍՊԸ |
| | | Առաջարկված գները, ՀՀ դրամ առանց ԱԱՀ | | |
| 1 | 271600 | 233800 | 0 | 176820 |
| 2 | 347200 | 275800 | 0 | 198800 |
| 3 | 218400 | 200400 | 0 | 237600 |
| 4 | 3600000 | 24300 | 81000 | 23800 |
| 5 | 600000 | 90000 | 147900 | 113500 |
| 6 | 90000 | 84000 | 90000 | 77700 |
| 7 | 135000 | 114000 | 141000 | 0 |
| 8 | 6000 | 5000 | 3000 | 0 |
| 9 | 277500 | 250500 | 0 | 189450 |
| 10 | 250000 | 210000 | 240000 | 0 |
| 11 | 10000 | 9300 | 11000 | 0 |
| 12 | 10000 | 9300 | 11000 | 0 |
| 13 | 10000 | 0 | 7600 | 8800 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | 25000 | 22300 | 18000 | 18500 |
| 15 | 182000 | 69200 | 0 | 0 |

**6. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.**

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 45-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Վիոլա>> ՍՊԸ-ին և <<ՌՈՄԱ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 և 4.3 կետերում արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. մարտի 3-ին ժամը 11:00-ին, ք. Գյումրի, Մազմանյան 3ա հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

Հանձնաժողով՝ ------------------------------ Ա. Անդրեասյան

------------------------------ Ա. Չախալյան

------------------------------ Բ. Խաչատրյան

Քարտուղար՝ ------------------------------ Բ. Մանուկյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2 /շարունակություն/

<<ՇՄԳԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

03.03.2017թ

ժամը՝ 11:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Անդրեասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Չախալյան

Բ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Մանուկյան

**1. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին մասին**

1.1 <<Վիոլա>> ՍՊԸ-ն և <<ՌՈՄԱ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

**2. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից են ճանաչվում՝

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ն՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով;

«Վիոլա» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով;

«Դելտա» ՍՊԸ-ն 8-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով:

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից են ճանաչվում ըստ չափաբաժինների՝

«Վիոլա» ՍՊԸ-ն՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով;

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով;

«Դելտա» ՍՊԸ-ն՝ 7-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ:

Երրորդ տեղ զբաղեցրած մասնակից են ճանաչվում ըստ չափաբաժինների՝

«Դելտա» ՍՊԸ-ն՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցում:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը՝ առաջարկել «Վիոլա» ՍՊԸ-ին, «ՌՈՄԱ» ՍՊԸ-ին և «Դելտա» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

3.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ք. Գյումրի, Մազմանյան 3ա հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

Հանձնաժողով՝ ------------------------ Ա. Անդրեասյան

------------------------ Ա. Չախալյան

------------------------ Բ. Խաչատրյան

Քարտուղար՝ ------------------------ Բ. Մանուկյան